



ԱՊԱՐԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ

Հասցե. ՀՀ Արագածոտնի մարզ 3103,
Ք.Ապարան, Բաղրամյան 26
Հեռ./Ֆաքս +/ 0252/ 6 23 60
Էլ.փոստ
aarhusaparan@mail.ru

ՀՀ Բնապահպանության նախարար
Արամայիս Գրիգորյանին

Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգող՝
Նատալյա Մանուկյանից

16.06.15թ.

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Գրիգորյան .

Ապարանի Օրհուս կենտրոնը, բնապահպանական մի շարք ՀԿ-ներ և փորձագետներ ահագանգ են ստացել Մեյքոյուղի Թուխմանուկի ոսկու հանքավայրում իրականացվող ինտենսիվ շինարարական աշխատանքների փաստի վերաբերյալ:

Բնակիչներին անհանգստացնում է այն հանգամանքը, որ «Մեգո Գոլդ» ՍՊԸ-ն կողմից ներկայացված «Թուխմանուկի ոսկու (կենտրոնական տեղամաս) հանքավայրի շահագործման» փոփոխված աշխատանքային նախագծին դեռևս

2014 թ.-ի դեկտեմբերի 11-ին ՇՄԱԳ փորձաքննության արդյունքում թիվ ԲՓ 93 ԲԱՑԱՍԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ է տրվել, սակայն այսօր հանքի տարածք է բերվել տեխնիկա, կատարվում են շինարարական աշխատանքներ.

Ելնելով վերը նշվածից և հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու անվտանգության պաշտպանությունը, հասարակության իրազեկության աստիճանի բարձրացումը և հավաստի տեղեկատվության տրամադրումը՝ խնդրում եմ Ձեզ Ապարանի Օրհուս կենտրոնին տրամադրել մանրամասն տեղեկատվություն հետևյալի մասին.

1. շինարարական ի՞նչ աշխատանքներ են իրականացվում հանքավայրի տարածքում,
2. ում կողմից են դրանք իրագործվում և ո՞րն է կատարվող աշխատանքների նպատակ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգող

Նատալյա Մանուկյան